ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր Կորյուն Աթոյանի ելույթը Գիտելիքի օրվա առթիվ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի սիրելի ուսանողներ, առաջին կուրսեցիներ

Ուրախ եմ Հայաստանի տնտեսագիտական մայր բուհի այս գեղատեսիլ բակում ձեզ հետ միասին սկսելու նոր ուսումնական տարին: Գիտելիքի օրը տոն է կրթության և ուսման արժեքն իմացող հազարավոր մարդկանց համար և հրաշալի է, որ դուք այդ մարդկանց շարքերում եք:

Հարգելի ծնողներ

Ցանկանում եմ Ձեզ ևս շնորհավորել այս հիշարժան օրվա առթիվ, քանի որ բոլորս գիտենք, թե երեխային համալսարանի ուսանող տեսնելը որքան նվիրական ցանկություն է ծնողի համար: Վստահ եմ, այսօր մեծ տոն է Ձեր բոլորի ընտանիքներում ու հուսով եմ, որ այդ դրական ապրումները ձեզ կուղեկցեն ուսումնառության ամբողջ ընթացքում:

Սիրելի ուսանողներ

Մեր համալսարանը վերջին տարիներին վերափոխումների մեծ փուլում է, ինչի մասին կարող են վկայել նաև բարձր կուրսերի

ուսանողները: Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում իրականացվել են բազմաթիվ ծրագրեր, որոնց մասին դուք մանրամասն իմանալու առիթ կունենաք, բայց ես ուզում եմ ձեզ հայտնել, որ այստեղ իրագործվում են գիտական, հետազոտական, կրթական և միջազգային բազմաթիվ ծրագրեր, բուհը տեխնիկական վերազինման և հիմնանորոգման շարունակական գործընթացում է: Մեր ամենամեծ հաջողությունների շարքում է «Ամբերդ» հետազոտական կենտրոնի ստեղծումը, որը թեև գործում է մի քանի տարի, սակայն արդեն ձևավորել է բարի համբավ և ծանրակշիռ հեղինակություն: Այս կենտրոնը բաց է ոչ միայն անվանի գիտնականների ու փորձագետների համար, այլև այն ուսանողների, որոնք հետագայում գիտությամբ զբաղվելու ցանկություն կունենան: Փոխանակման բազմաթիվ ծրագրերը, կրթական գործընթացի բարեփոխումները, սոցիալական ծրագրերի ներդրումը, ուսանողների հանգստի և ժամանցի կազմակերպումը, կեցության պայմանների տրամադրումը և համալսարանի տասնյակ նախաձեռնությունները, որոնք իրականացվում են համալսարանի ղեկավարության և աշխատակազմի կողմից, միտված են միայն մեկ նպատակի՝ որակյալ կրթություն տրամադրելուն:

Խոսքս ցանկանում եմ ուղղել հատկապես ձեզ, սիրելի առաջին կուրսեցիներ

Մենք պատկերացնում ենք, թե որքան դժվար է եղել ձեզ համար համալսարանի ընտրության հարցում կողմնորոշվելը: Կարող ենք պատկերացնել այն ապրումները, որոնք ամեն տարի դիմորդներն ունենում են ընդունող հանձնաժողովներում դիմում-հայտը լրացնելիս: Սակայն ես ցանկանում եմ հավաստիացնել ձեզ, որ

չնայած կրթության ոլորտում այսօր առկա մրցակցությանը, հայաստանյան և արտերկրի համալսարանների առկայությանը, դուք ճիշտ եք կողմնորոշվել և ընտրել եք տնտեսագիտական կրթություն առաջարկող մասնագիտացված համալսարան: Միգուցե դուք այստեղ ևս կհանդիպեք դժվարությունների, բայց ուզում եմ հավատալ, որ չեք հիասթափվի, քանի որ կտեսնեք՝ մեր ջանքերը և նպատակներն ազնիվ են, և մեր միակ խնդիրը մրցունակ մասնագետներ պատրաստելն է, որոնք համալսարանն ավարտելուց հետո կկարողանան ստեղծել իրենց կարիերան: Իհարկե, միայն մեր ջանքերը բավարար չեն, հարկավոր է նաև ձեր կամքը և ուսման արժևորման ձեր բարձր գիտակցությունը, որպեսզի արդյունքները լինեն գոհացնող ինչպես ձեզ, այնպես էլ մեզ համար:

Բարի երթ եմ մաղթում բոլորիդ և հորդորում լինել պատասխանատու ձեր կյանքի այս որոշիչ փուլում:

Շնորհավորում եմ բոլորիս:

Հարգանքով՝

ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ